

Ս. Արքեպիսկոպոսի Առաջնորդի թէմին Վրաստանի և Իմէրէթի, Հորադատի Մայր Աթոռոյ ողջունիւ յայտ առնեմք:

Քաջայայտ է Ձեր Սրբազնութեան, որ անցեալ տարին երում ես արձակած էի Ներսիսեան դպրանոցի Տեսուչ Բալադեանցին. բայց յարգելի Հոգաբարձութիւն թախանձագին կերպով խնդրեց, որ գոնէ մի տարի ևս թողում իւր պաշտօնի մէջ. բայց այժմ կրկին կոնդակովս յայտնում եմ Ձեր սրբազնութեան, որ լիշեալ տեսուչ բացարձակ կերպով արձակուած է իւր պաշտօնէն կրկին կոնդակովս զնոյն առաջինն Հաստատելով: Սոյն պատուէրս ամենայն ճշտութեամբ պէտք ի կատար ածէք, և անմիջապէս ձեռնարկէք նոր Տեսչի ընտրութեան: Ես նոյն իրաւունք Ձեզ և պատուարժան Հոգաբարձութեան կ'թողում որ ամենայն Համերաշխութեամբ ընտրէք Ձեր Տեսուչ զով և կամիք թէ եկեղեցական դասէն և թէ աշխարհական: Այս կարգադրութիւնս առ ժամապէս է ըստ կանոնին, որովհետև մտադրութիւն ունիմ նոր կանոնադրութիւն կազմել բոլոր մեր ազգային դպրանոցներուն Համար Համակերպ և միօրինակ ըստ պահանջման ժամանակին:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 5 Յունիսի 1903 ամի

և ըստ Տոմարիս Ռ. Յ. Ծ. Բ.

Ի Հայրապետութեան Մերում Ժ. ամի

յԱրարատեան Մայր Աթոռս ս. Էջմիածնի

Ի Վարչապետ

Թ. 733

Տեսուչ պ. ս. Բալադեանը Հոգաբարձութեան ամսոյս 11-ի ժողովում արձակուեցաւ պաշտօնից և եօթնամեայ ծառայութեան Համար տրուեցաւ նորան նուէր 2000 ռուբլի:

### Տ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Վեհափառ Հայրապետի հրամանով և թեմիս բարձր. սրբազան Առաջնորդի առաջադրութեամբ բարձր. Տ. Տիրայր վարդապետը նշանակուած է Թիֆլիզի ս. Սարգիս վանքի վանահայր, կառավարիչ Մայր Աթոռի Տիկնիսում գտնուած կալուածների և Կոնստանտնուպոլի նախանդամ բարձր. Տ. Արսէն վարդապետի տեղ, որ հիւանդութեան պատճառով մեկնում է արտասահման: